Մեր սրտերի սիրտ Արցախը

Լյուդվիգ

ԴՈՒՐՅԱՆ

Բանաստեղծ

Զարնան երկու ամիսը գնաց, բայց գարնան հոտ չենք առնում... Ում նայում ես՝ հոգսը երեսից թափվում է ու հոգսը մի տեսակ հոգս չէ, որ մի անուն տաս ու պրծնես. աղետյալ գոտու հոգս, Արցախի հոգս, գնեղի կատաղի բարձրացման հոգս, լույսի չքացման հոգս, գյուղաշխարհը վարուցանք չի անում, որովհետև հեղուկ վառելիք չկա, այս էլ յուրատեսակ հոգս. հո՞գս ու հոգս... Այսպիսի ահավորությունը եկել է ու փաթաթվել մեզ: Դեռ չեմ ասում մեր շրջապատում տիրող, չափը անցկացրած խաթարանքների մասին, որոնք գողություն են ու թալան, հաշիշամոլություն ու սպանություն, արհամարհանք են ու ահաբեկում... Այս ամենի մեջ, եթե ատված ինձ նմաններին էլ տվել է գրողի կոչում, դե եկ ու դիմացիր, այդ ամենը սրտիդ միջով մի անցկացրու և կարողացիր մի վայրկյան հանգիստ ապրել... Այս ամեն ճշմարտությունը ես չթվեցի, որ բողոքեմ. ո՞ւմ բողոքեմ, ճակատագիր է, այն էլ հայի ճակատագիր, դե, ուրեմն՝ դու քո ճակատագրից չես կարող փախչել, պիտի կարդաս ճակատագիրդ ու նորից, ինչպես հազարամյակներ, դեպի լույսը տանող ճանապարհ փնտրես: Ճանապարհ... Իսկ ինձ հիմա առավելագույնս միայն մի ճանապարհ է գիշեր ու ցերեկ մտահոգում. դա Արցախի փրկության ճանապարհն է: Քնում եմ թե արթնանում, միտքս ու հոգիս Արցախի հետ է: Թուրք դահիճների ավերած տների հետ ավերվում է իմ սիրտը, կերածս հացից ամաչում եմ, որ այդ կտոր հացը, թե ես ուտում եմ, բայց հազիվ կյանքի մի անկյուն գտած, նկուղում արցախցի մայրն ու երեխան անհաց են ու անջուր, «գրադի» կրակ է թափվում գլխներին, իսկ մենք տաք անկողնում քնում ենք... Այդ մայրն ու երեխան և հազարավոր նրանց նմանները ի՞նչ մեղք են գործել, որ աշխարհում ոչ մեկը խղճախոր չի լսում նրանց ձայնը, փրկության միայն խոստումներ, խոստումներ, բայց իրականում ոչինչ չի փոխվում, ընդհակառակը՝ օրեցօր վատթարանում է նրանց վիճակը... Կարծես տասնութ թվականի օրերն են վերադառնում, պտտվում է նորից նույն, մեզ ծվատող պատմության անիվը: Բոլոր մեծավոր պետությունները շահի դիվանագիտություն խաղալով, մեզ առերես են հուսադրում, հայտարարելով, որ Արցախում հայակուլ կրակը պիտի անհապաղ դադարեցվի, բայց իրականում այդ կրակը առավել է սաստկանում՝ սփռելով միայն մահ ու մոխիր... Ո՞վ է հաղթելու այս կռվում՝ արդարությո՞ւնը, բայց ո՞ւր է նա, գոնե մի անգամ դրա երեսը տեսնեինք, աչքերով նայեր մեզ, բերանը բանար, որ գոնե իմանայինք խոսել գիտե, թե՞ ընդհանրապես համր է ծնվել: Արցախին «փրկություն» տվողներից գոնե մի անգամ լսե՞լ եք, որ ասեն՝ ախր, Արցախը Հայաստանի սիրտն է, ողնաշարը, շունչը, էլ ուր է այս թուրքը իրենը համարում, վերջապես, պատմություն գոյություն ունի, դառնանք ու նայենք և ճշմարտությունն ասենք այս նվաճողներին: Չեն ասում, չեն ասի, որովհետև իրենց թաթի տակ ուրիշի պոչն է, իրենց պոչը՝ ուրիշի թաթի տակ... Արցախի համար, մեր վիճակի համար իրար հետ թշնամի չեն դառնա, ընդհակառակը՝ իրար կշահեն, կպահեն, որ շահի օրենքը չխախտվի, որ իրենցով անեն աշխարհը, բաժանեն ոնց ուզենան... փոքր ազգերին էլ իրար դեմ կկռվեցնեն, կթշնամացնեն, որ հետո հաշտեցնող դառնան, իբրև թե Արցախի կրակ հանգցընող... Այս ամենը մի կաթիլ ջրի պես պարզ է... Էլի մենք հույսներս մե՛զ վրա պիտի դնենք, հիշելով Պարույր Սևակի «Քիչ ենք, բայց հայ ենք» թևավոր խոսքը:

Հիմա կռվում են Արցախում իսկապես հայ մորից ծնված դավթաշունչ քաջերը. թող աստծո պահապան խաչը նրանց գլխին լինի:

Վերջերս հեռուստատեսությամբ տեսա, թե ինչպես արդեն ծեր մի մայր, հայ ազատամարտիկների հետ ձմռան ցրտին ու սարերում իր քաջ զավակների հետ էր, նրանց քաջալերում է իր մայրասուրբ վրեժի արդար խոսքով, հաց ու ջուր էր տալիս նրանց, խոր գիշերին ինքը անքուն՝ ծածկում էր բոլորին, որ չմրսեն, որ տաքանան մայրագորով ջերմությամբ, որ լուսաբացին նորից գրոհեն հաղթանակի լուսաբացի համար: Փա՜ռք այդ մորը... թող շատ մայրեր իմանան այդ մոր մասին, իմանան, որ զավակ են ծնել ոչ թե ապահով հարկի տակ պահելու, այլ դժվարին ժամին հայրենիքը արյան գնով փրկելու համար... Իմ հույսը մեծ է, մենք կփրկենք Արցախը, այդ հրավառ օրը կտեսնենք, նրան կհանենք այդ մահասև կրակե օղակից: Իրենց կյանքը տված շանթավրեժ քաջերի արյունը իզուր չի կորչելու: Նրանց երազանքը, որ կանաչ օրորոց էր, կօրորվի անպայման Արցախ աշխարհում և նրա մեջ կյանքությամբ կգորանա հայ արևամանուկը... Արցախյան բոլոր շեներից կբարձրանա օջախների հացաբույր ծուխը... Մենք մահ չունենք, ով մեզ այսօր սպանել է փորձում՝ ինքը հենց մահն է, մեռածը, որովհետև կյանք ունեցողը կհասկանա կյանքի անուշությունը, տուն չի ավերի, մանկանց լուսաշունչ աչքերի մեջ չի լցնի գեհենի սարսափը... թե հացի համն իմանա, սով չի սփռի, չի ցուցանի տանջողի դաժանության բոլոր ձևերը, չի դիմի սատանաբարո խարեության, այդքան օրինազանցությունների...

Մենք հազարամյակներ անցել ենք միայն տառապանքների միջով, տառապանքներին ընդառաջ ենք ելել Մաշտոցով ու Նարեկացիով, Թումանյանով ու Կոմիտասով, Անդրանիկով ու Նժդեհով... Այս տառապանքին էլ ընդառաջ ենք ելել արցախափրկիչ հայկազուն քաջերով: Մենք մեր զենքը վար չենք դնի մինչև չփրկենք մեր մտքերի միտք, մեր սրտերի սիրտ Արցախը: